Նոյեմբեր.

Ի նոյեմբեր ամսոյ արժան է որ 'ի շող և 'ի ջերմային վայրքն՝ որ մատներ (?) և նօսր գետինն լինի և սպիտակ, 'ի յայս ամսոյս մուտն սկսէ և տնկէ զայգիքն մինչև 'ի դեկտեմբերի քսան օրն. բայց 'ի ծանր և 'ի դիճային գետինն՝ 'ի փետրուարն է պարտ տնկել։ Նոյնպէս և 'ի նոյեմբերս է պարտ վաստակել և փորել և աղբել զայգիքն՝ զդահն [1] և ըզմատղաշն։ Եւ գոնն լաւ է այգեացն քան զաղբն. որ յամեն տունկքն կիսակուժ [2] մի ընես 'ի տակքն, կամ հանապ [3] մի որ երբ լինի նորէն փորած։ Եւ թէ 'ի սոյն ամիս հօտես զջերմային զվայրսն՝ աղէկ է. բայց վստահեցաք որ աշնան հօտելն աղէկ ուժովցնէ զտունկն. բայց գարնան հօտելն բերին լաւ է. զի շատ բեր տայ առնուլ քան աշնանն։ Նոյնպէս և զձիթենիքն յայս ամիս է պարտ հօտել, և զհին գօսացեալ ճուղքն հատանել. զի թէ հատանես զգօսացեալն, նա մատղաշին աղէկ է. զի ծաղիկ և բեր առնու և մեծ լինի պտուղն։ Եւ 'ի սոյն ամիս զպատրուսած տունկն և զորթն 'ի հողն թաղել, որ եռցրնէ հողն զինքն ընդ մայրանն [4] և ամրցրնէ. նոյնպէս փորել և ակնբցել զամենայն, և լաւ և աղէկ ոչխարաց աղբով աղբել. կամ յամեն տնկի տակն պտղի ձիթի տուրտինն [5] լից երեք նուկի կամ չորս. և 'ի տուրտինդ սակաւ մի աղ խառնէ։

Եւ 'ի նոյեմբեր ամիս տնկէ և ցանէ զկաղնի. և ցանէ զբակլայն. և զքաղցուով լցած կարագն սրբել զբերնի փրփուրն՝ որ յեռացմանէն ժողովեալ լինի և զերդ կարագ լինի դարձեալ 'ի բերանքն. բայց զանոնց որ դադարել լինի եռն։

Եւ յայս ամիս է պարտ ժողովել զայս ազգ ծառանցս տունկքն զոր գրեմք. և տնկել՝ տանձի, խնձորի, կռենոնի [1], նռնենի, ընկուզի և այլ այսպիսիք։ Եւ զշուտահաս ծառքն յայս ամիս է արժան պատրուսել։ Եւ յայս ամիս 'ի փուլն՝ է պարտ զամենայն փուշ և զանտառախիտ քաղն սրբել, կտրել, և 'ի զինոյն հանել։ Եւ են ոմանք որ 'ի նորն լուսնին մինչև 'ի վեշտասան օրն՝ տնկեն. և այլք երբ լուսինն երեք աւուր լինի. և են որ երբ լուսինն վեշտասան աւուրն անցնի մինչև քսան աւուր լինի՝ նա չչխեն տնկել. վասն զի ասեն թէ լուսնին լիութիւն չորցրնէ և ամրեցնէ ըզտունկն. բայց մեք 'ի յայն եմք հաւան՝ որ լուսնի վերջ այսինքն ծննդեան ժամանակն որ չերևէ՝ այն է լաւ քան զամենն. զի տունկն զարևու ջերմութիւնն միայն առնու. զի թէ զարևուն և զլուսնին միատեղ առցէ, նա երկոքին չողէն չորնայ։ Եւ որ ուզէ որ չինուց փայտ կըտրէ 'ի լուսնի չիքն որ չերևէ, այսինքն լուսնի ծնունդ առած ժամանակին՝ կըտրէ։ Եւ այսով ճանաչես զլուսինն երբ ներքև լինի. չծնած օր առաջին խրիկունն երևայ լուսինն 'ի կէս պահէն. յառաջ ներքև գետնին է, մինչև 'ի մէկ այլ օր յառաջի պահուն կէսն երևէ. յերկու գիշերն՝ երևայ մինչև 'ի մէկ այլ աւուր 'ի չորս բաժնէն մէկ կենայ աներևան. 'ի հինգ գիշերն երեք [2] պահն և պահ մի վեց բաժին՝ մինչ 'ի մէկ այլ օրն 'ի նոյնդ. 'ի վեց գիշերն ինայ զչորս պահն ու պահ մի եօթն բաժին, մինչ 'ի մէկ այլ օրն 'ի նոյն։ Եօթներորդ գիշերն ինայ հինգ պահ, և պահ մի վեց բաժին. և բաժին մի վեցեակ, մինչ 'ի մէկ այլ օրն 'ի նոյն [3]. յիններորդ գիշերն եօթն պահուն 'ի գիշերոյն 'ի վեր կենայ. և պահու մի վեցեակ, մինչ 'ի մէկ

1 Հին։
2 Կէս փարչ կամ ման։
3 Այլ ման։
4 Պատրուսած տեղ տնկոյն։
5 Աւելցուք, մրուր։

1 Կռնի փշոտ տունկ մ'է, իսկ այս պտղաբեր ծառ կ'երևի։
2 Յօրինակին ԿԳ։
3 Ութերորդն պակսի։

այլ օրն 'ի նոյն։ Ի տասն կենայ 'ի գիշերուանս յութ պահէն 'ի վեր, և պահու մի ութ բաժին, և բաժնի մի վեցեակ մինչ 'ի մէկ այլ օրն 'ի նոյն։ — Տասնեմի գիշերն կենայ ինն պահէն 'ի վեր մինչև զմէկ բաժնին վեցեակն։ Ի տասուերկու գիշերն կենայ տասն պահ, և պահու մի զերեք բաժինն, և պահու մի վեցեակն մինչև 'ի մէկ այլ օրն 'ի նոյն։ Ի տասն երեք՝ կենայ տասն մէկ պահն և պահու մի զերեք բաժին։ Տասն չորս գիշերն՝ կենայ յարևցայլեն մինչև յարևմարքն, և յայս օրերս լաւ է բանել 'ի տնկելն, քան երբ արեգակն վերև կենայ. 'ի տասն հինգ գիշերն 'ի կէս պահէն կենայ աներևան, թապալումն առնէ 'ի մէկ այլն որ պակսէ. 'ի տասն վեցն կենայ 'ի մէկ պահուն մինչև 'ի գիշերուան մէկ պահն։ Ի տասն եօթն կենայ զաւուր մէկ պահն և զմէկալէն կէսն մինչև 'ի գիշերն 'ի նոյն։ Տասն և ութ կենայ երկու պահէն 'ի վեր ու մէկ պահուն վեցեակն մինչև 'ի գիշերն 'ի նոյն. 'ի տասն և ինն օրն կենայ յաւուրն երեք պահէն 'ի վեր մինչև 'ի գիշերն 'ի նոյն։ Քսան օրն կենայ զերեք պահն ու պահու վեց բաժին մինչև 'ի գիշերն 'ի նոյն։ Քսան մէկ օրն կենայ յաւուրն 'ի չորս պահէն ու պահու մի ինն բաժին մինչև 'ի գիշերն 'ի նոյն։ Քսան երկու օրն կենայ աներևան զհինգ պահն և պահու մի վեց բաժին, և պահու մի վեցեակ մինչև 'ի գիշերն 'ի նոյն։ Քսան երեքն կենայ աներևան 'ի վեց պահ զաւուրն և պահու մի մէկ բաժին. և բաժնոյ մի վեցեակ մինչև 'ի գիշերն 'ի նոյն։ Քսան հինգ կենայ աներևան ութ պահն, մինչև 'ի նոյն։ Քսան վեց կենայ աներևան յինն պահէն 'ի վեր, և պահու մի եօթն բաժին, և բաժնի մի վեցեակ մինչև 'ի գիշերն 'ի նոյն. քսան և ութ կենայ աներևան 'ի տասն պահէն 'ի վեր և զմէկ պահու երեք բաժինն. և բաժնի մի վեցեակ մինչև 'ի գիշերն 'ի նոյն։ Քսան ինն կենայ ներքև գետնին 'ի տասն մէկ պահէն 'ի վեր. և պահու մի երեք բաժին և բաժնոյ մի վեցեակ մինչև 'ի գիշերն 'ի նոյն։ Երեսուն օրն դառնայ յարևելս։ Եւ 'ի եօթն[1] օրն 'ի յայս ամսոյս ելնէ աշունն և մտանէ ձմեռն։

Ի ՎԱՍՏԱԿՈՑ ԳՐՈՑ

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

ԿԻՐԱԿՈՍ ՊԱՏՄԻՉ

Ազգային պատմագրոյ նոր հատոր մ'ալ կ'ընծայի 'ի լոյս, այն է Համառօտ պատմութիւն Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ 'ի սրբոյն Գրիգորէ ցառաջս իւր։ Պատմիչս անունն արդէն բաւական ծանօթ է պատմասէր բանասիրաց. ժամանակակից և ուսումնակից մեծին Վարդանայ Արևելցւոյ՝ ծնեալ 'ի սկիզբն ԺԳ դարու, աշակերտեալ Վանականայ վարդապետին, որուն հետ 'ի գերութիւն վարեցաւ 'ի Թաթարաց, ինչպէս ինքնին կարգաւ կը պատմէ իր պատմութեան մէջ (129–135 էջ). յետոյ ազատելով՝ արևելեան Հայաստանի վանքերուն մէջ ապրած և վախճանած է յամի տեառն 1272։

Ինչպէս իր պատմութեան վերնագիրն ալ կը ցուցընէ՝ հեղինակս նախ համառօտ կարգաբանութիւն մը կ'ընէ ազգային եկեղեցական և աշխարհական առաջնորդաց՝ սկսելով 'ի Լուսաւորչայ Հռովմ երթալէն մինչև իր ժամանակը. զնոյն ընելով նաև Աղուանից համար ալ, իբրև իր ընիկ նահանգին։ Ըստ այսմ մասին իր պատմութիւնը մեր դիմաց մեծ արժէք մը չկրնար ունենալ. վասն զի նոյն պատմութիւնները աւելի հանճարեղ անձինք ճոխագոյն և ընտիր ոճով պատմած են, սակայն և այնպէս կրնան գտնուիլ իր երկասիրութեան մէջ ալ այնպիսի բաներ՝ որ ուրիշ պատմիչք կամայ կամ ակամայ թողած ըլլան. թող որ երբեմն երկու անտարբեր զուրցուած խօսք ալ կրնան ուրիշ հեղինակաց մթութիւնը պարզել, և առանձնա-

1 Յօրինակին ԻԷ։ Ոչ ըստ արևագարձին այլ սկսանելոյ ցրտութեան՝ ձմեռնամուտ սեպէ։